ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 6

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆԱՆՇՄԱՆ ՀԱՐՑՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ

ք. Երևան **11.12.2019թ. ժամը 17:30**

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ, գնահատման աշխատակազմի պատասխանատու (ԳԱՊ)՝

- ՀՀ ՀՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը,

գնահատողներ՝

- ՀՀ ՊՆ ՎՀՄԲԿ բժիշկ Գ.Անտոնյանը,
- ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍԱ բաժնի գլխավոր մասնագետ Հ.Ավետիսյանը,

Գնումները համակարգող՝

ՀՀ պաշտպանության նախարարության աշխատակազմի քարտուղարության ընդհանուր բաժնի առաջատար մասնագետ Մ.Ամիրյանը,

Քանի որ նիստին բացակայում էր ՀՀ ՊՆ ՆՏԱԴ ԹԱՎ Պ, Դ և ԲՍ ապահովման բաժնի պետ Ա.Նազարյանը, ուստի գնահատող հանձնաժողովի նախագահի լիազորությունները իրականացնում էր ՀՀ ՀՈՒ ՌԲՎ ՆՏԱ բաժանմունքի պետ բ/ծ փոխգնդապետ Վ.Վահանյանը:

«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգի հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին.

(Մ.Ամիրյան)

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.
2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. Մասնակիցների՝ գնանշման հարցման ընթացակարգի հրավերով պահանջվող (նախատեսված) որակավորման պահանջներին իրենց համապատասխանությունը հիմնավորող փաստաթղթերի առկայության և դրանց գնանշման հարցման ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխանության, Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի կողմից ներկայացված համապատասխան տեղեկատվության քննարկման և ընտրված մասնակիցներին հայտարարելու մասին.

(Մ.Ամիրյան)

1.1 Քանի որ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի **27.11.2019թ.**-ին տրամադրած՝ ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցման մասին տեղեկատվության համաձայն **1-ին տեղ զբաղեցնող մասնակիցները** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորություններ չեն ունեցել, ուստի գնահատող հանձնաժողովը որոշեց մասնակիցների ներկայացրած հայտարարությունները համարել իրականությանը համապատասխանող:

25.11.2019թ-ին գնումների համակարգող Մ.Ամիրյանը www.armeps.am համակարգի միջոցով ծանուցեց 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցներին հրավերով սահմանված ժամկետում և կարգով /3 աշխատանքային օրվա ընթացքում/ ներկայացնել ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը՝ m.amiryan@mil.am էլեկտրոնային հասցեին: Սահմանված ժամկետում մասնակիցները ուղարկել են վերը նշված **փաստաթղթերը**, բացառությամբ «ՄԻ ՎԵՆԱՍԻՐ» ՍՊԸ-ի:

Մասնակիցների կողմից ներկայացված փաստաթղթերում առկա էին անհամապատասխանություններ հրավերի պայմաններին, մասնավորապես.

-Ընթացակարգի հրավերի 75-րդ չափաբաժնի տեխնիկական բնութագրում նշված է Ներշնչափողային խողովակի հավաքածու թոքերի սելեկտիվ ինտուբացիայի համար, ցածր ճնշման մանժետով, երկլուսանցքանի աջ 41FR: Տրախեալ մանժետի տրամագիրը՝31մմ +/-15%, բրոնխեալ մանժետի տրամագիծը՝ 21մմ +/-15%: Կազմը՝ Ռոբերտշոու տիպի էնդոբրոնխիալ խողովակ-1հատ, Ստիլետ 1 հատ, ներկառուցված T կոննեկտոր 2 հատ, կոննեկտոր 15mm 2 հատ, Y ձև կոննեկտոր 1 հատ, Պտտվող կոննեկտոր 1 հատ, Արտածծման ծայրադիրներ 4 հատ:

«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված տեխնիկական բնութագրում/Հավելված 3.1/ նշված չէր Արտածծման ծայրադիրների քանակը, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին:

03.12.2019թ. Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց **երեք** աշխատանքային օրով կասեցնել նիստը և գնումների համակարգողը ծանուցեց **«Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ**-ին մինչև կասեցման ժամկետի ավարտը **/04.12.2019թ.-06.12.2019թ./** շտկել վերը նշված անհամապատասխանությունը, իսկ **«ՄԻ ՎԵՆԱՍԻՐ» ՍՊԸ**-ին՝ ներկայացնելու ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ ընթացակարգի հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

Մասնակիցները սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել են պահանջվող փաստաթղթերը:

1.2 **11.12.2019թ.** հիմք ընդունելով հանձնաժողովի անդամների կողմից ներկայացված գնահատման թերթիկները՝ հանձնաժողովը որոշեց **«Կուրացիո» ՍՊԸ-ի, «Նաիրի-Ալանիկա» ՍՊԸ-ի և «ՄԻ ՎԵՆԱՍԻՐ» ՍՊԸ-ի** որակավորման չափորոշիչները գնահատել **«ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15»** ծածկագրով գնանաշման հարցման ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանող, վերջիններիս հայտարարել ընտրված /հաղթող/ մասնակիցներ՝ այն չափաբաժինների մասով որտեղ ճանաչվել էին 1-ին տեղ զբաղեցնող, և անգործության ժամկետի ավարտից հետո պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

1.3 Հանձնաժողովը որոշեց հաստատել «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը և հրապարակել՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. Հանձնաժողովի հաջորդ նիստի անկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

(Մ.Ամիրյան)

2.1 «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-20-9/15» ծածկագրով ԳՀ ընթացակարգի արդյունքների ամփոփման նպատակով հանձնաժողովի նիստը հրավիրել ոչ ուշ քան գնման պայմանագիր կնքվելու, իսկ չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվա ժամը 17:10-ին, ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտի ԳՓՁ վարչության նիստերի դահլիճում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Գնահատող (ԳԱՊ)	_____	Վ.Վահանյան
Գնահատող	_____	Գ.Անտոնյան
Գնահատող	_____	Հ.Ավետիսյան
Գնումները համակարգող	_____	Մ.Ամիրյան